Թավրիզի, Նախիջևանի, Երևանի գրավումը. բ) օսմանյան բանակի հակահարձակումը, պարսից նահանջը և դրա հետ միաժամանակ մեծ բռնագաղթը. դ) ղզզըլբաշների հետագա նվաճումները»[13]:

Բովանդակային մյուս սևեռումը հայոց կաթողիկոսների գահակալման ու նրանց գործունեության պատմությունն է, որն իր հերթին ներքին տարածքում բաժանվում է երկու մասի: Առաջին մասը ներկայանում է իբրև կորուստների ու ավերումների, իսկ երկրորդը՝ վերածնության ու զարթոնքի շրջան: Հենց այս հանգամանքը նկատի ունի Աշոտ Հովհաննիսյանը, երբ գրում է. «Հատկանշական է, որ... Առաքել Դավրիժեցին գրում էր այդ դարի (17-րդ–Ա.Ն.) առաջին քսանհինգամյակի պատմությունը որպես հայոց աշխարհի և Էջմիածնի ***ավերման*** պատմություն, դարի երկրորդ քսանհինգամյակի անցքերը նա շարադրում էր որպես հայոց աշխարհի և Էջմիածնի ***նորոգման*** պատմություն» (ընդգծումը բնագրում–Ա.Ն.)[14]: Մանուկ Աբեղյանը, զանց չառնելով պատմական ճշմարտությունը, դա բացատրում է նաև այն հանգամանքով, որ Դավրիժեցին իր պատմագիրքը գրել է երկրորդ շրջանի կաթողիկոսների հանձնարարությամբ, և ինքն էլ, ի վերջո, այդ սերնդի ներկայացուցիչն է[15]:

Այս ամենը վկայում են, որ «Գիրք պատմութեանց»-ը բովանդակային հարթության մակարդակում ներկայանում է թե՛ գաղափարական զարգացումների, և թե՛ պատմագիտական պահանջների թելադրանքով ու միասնականությամբ:

---

13 ***Լորետա Դանեղյան,*** Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, էջ 48:

14 ***Աշոտ Հովհաննիսյան,*** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 121–122:

15 Տե՛ս ***Մանուկ Աբեղյան,*** Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, էջ 455-456: